ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Արամուս գյուղական համայնքի հաշվետու համայնքային ժողովի

07 հուլիս 2012 **գ. Արամուս**

2012 թվականի հուլիսի 7-ին տեղի ունեցավ Արամուս համայնքի հաշվետու համայնքային ժողովը՝ 01.01.2012-01.07.2012թ.թ. ժամանակահատվածում համայնքի ղեկավարի կողմից կատարված աշխատանքների մասին:

Ժողովին ներկա էին համայնքի ավագանու 6 անդամներ՝

1. Առաքելյան Հովհաննես
2. Եղիշյան Աշոտ
3. Խաչատրյան Արտակ
4. Սողոմոնյան Գեղամ
5. Ստեփանյան Վրույր
6. Փիլիպոսյան Վահան

Համայնքի ղեկավարի աշխատակազմից՝

1. Խաչատրյան Ապրես
2. Վարդանյան Մանե
3. Նիկողոսյան Սամվել
4. Վարդանյան Զաքարիա
5. Եղիազարյան Կարինե
6. Վարդանյան Վերգինե
7. Ղազարյան Անուշ
8. Շմավոնյան Շահեն

Ժողովին մասնակցում էին համայնքի մի խումբ բնակիչներ

ՕՐԱԿԱՐԳ

1. Համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի կողմից կատարված աշխատանքների հանրային իրազեկման մասին:

ԼՍԵՑԻՆ՝

Համայնքի ղեկավար Հրայր Նիկողոսյանի զեկույցը 2012 թվականի առաջին կիսամյակի ընթացքում համայնքի ղեկավարի և աշխատակազմի կողմից իրականացված հիմնական գործառույթների մասին:

2011 թվականի դեկտեմբերի 16-ին համայնքի ավագանու N 57-Ն որոշմամբ հաստատվել է 2012թ. համայնքի բյուջեն,ըստ որի եկամուտները կազմել են 56115.8հազ.դրամ, ծախսերը՝ 60187.7հազ. դրամ: Պակասուրդը կազմել է 4071.9հազ. դրամ, որը լրացվում է համայնքի բյուջեի մնացորդի հաշվին:Հողի հարկի չափը կազմել է 7400.0 հազ. դրամ, հավաքագրվել է 1405.4 հազ: Գույքահարկը նախատեսվել է 7366.0հազ. դրամ հավաքագրվել է 3110.1հազ.դրամ: Տեղական տուրքերը նախատեսվել է 810.0 հազ. դրամ հավաքագրվել է 352.5 հազ. դրամ:Հողի վարձավճարներից հավաքագրվել է 1429.5 հազ. դրամ:

Այս ժամանակահատվածում համայնքի փողոցների արտաքին լուսավորության վերականգնման համար ծախսվել է 8500.0 հազ. դրամ և կատարվել են համապատասխան աշխատանքները:

Գյուղապետարանի պատուհանները նորով փոխարինելու համար ծախսվել է 431.0 հազ. դրամ:

Համայնքի կենտրոնում տեղադրվել է Հայրենական Մեծ պատերազմում զոհվածների հուշատախտակ, որի համար ծախսվել է 550.0 հազ. դրամ:

Համայնքը մեծ պատրաստակամությամբ է օժանդակում սոցիալական օգնության ծառայության բնագավառը:Օգնության խնդրանքով դիմած անապահով ընտանիքներին, մահացած բնակչների հարազատներին, համայնքում նոր ծնված երեխաների մայրերին, հաշմանդամներին տրվել է սոց. օգնություն համայնքի բյուջեից հաշվետու ժամանակաշրջանի համար 4310.0 հազ. դրամի չափով:

Համայնքի բյուջեից աջակցություն է ցուցաբերվել պետական բուհերում սովորող անապահով ընտանիքների ուսանողներին՝ փոդանցվել է ուսման վարձավճար՝ 1482.7 հազ. դրամի չափով:

Համայնքի բյուջեի միջոցներից, համայնքի ղեկավարի նախաձեռնությամբ և ստեղծված սոցիալական ծառայության հանձնաժողովի կողմից կատարված ուսումնասիրություններից ելնելով համայնքի բյուջեից 1433.6 հազ. դրամի չափով կատարվել է հիվանդանոցային ծառայությունների արժեքի փոխհատուցում, համայնքի բնակիչների առողջական խնդիրների լուծման նպատակով:

ԵԼՈՒՅԹՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համայնքի բնակիչներ Սամվել Գրիգորյանը, Մանվել Մակարյանը, Գագիկ Գրիգորյանը հարց բարձրացրեցին Արամուսի սեփականաշնորհված հողերին կից սելավատարի մաքրման աշխատանքների մասին, որը խոչընդոտում է վարելահողերի մշակման աշխատանքներին:
Համայնքի ղեկավարը հավաստիացրեց, որ կաջակցի խնդրի լուցմանը:

ՈՐՈՇՎԵՑ

1. Համայնքի ղեկավարի հաշվետվությունն ընդունել ի գիտություն:

Արամուս համայնքի ղեկավար՝ *Հ. Նիկողոսյան*